Կայսեր սակս հանդիսի Լուսաւորութեան, և ըստ վկայութեան իւրեանց Վիրք և Սրբոյք հետեւակ Յունաց, Հապէշք, Գոլթիք և Ասորիք 'ի մասնէ Հայոց։ Քննեցան և արձանագրութիւնք դիւանին, յորում գտան հրովարտակ Սուլթան Մէհէմմէտի (١٠٦٦, ١١٣٠—١١٣٣) 'ի ժամանակի նորոգութեան տաճարին Ս. Յարութեան, յորում Յոյնք գաղտնի ետուն ջնջել զարձանագրութիւնս հրովարտակացն Հայոց 'ի դիւանէն, և հակառակ նոցին առին հրովարտակ եւ պահեցին, և 'ի նստիլ թագաւորին նորոգեցին. իմացեալ Հայոց վերստին հաստատեցին զիրաւունս իւրեանց, և ըստ այնմ տուաւ հրովարտակ և գործադրեցաւ յԵրուսաղէմ. ջնջեցաւ հրովարտակն Յունաց, եւ հրաման եղեւ վարիլ ըստ նախնի սովորութեան, և հակառակ նմին չտալ հրովարտակ՝ և 'ի մատուցանել զայն յատեան՝ չընդունիլ։ Եւ արձանագրութիւնքն Հայոց գոլով յեպիսկոպոսական դիւանին՝ 'ի լուսանցն (տէրքենար) նշանակեալ են երեքին ազգքն հետեւակ Հայոց, եւ ըստ այնմ տուեալ հրովարտակ (١١٤٢), և զկնի միոյ ամի նորոգեալ։ Այսպէս 'ի բովանդակ գրեանս Հայոց, Հապէշք, Գոլթիք և Ասորիք հետեւակ են նոցա, եւ նոքա տնօրինեալ զգործս նոցին։ Յետ քննութեանս այսորիկ՝ վճիռ ետ դենպէտն՝ այն է Բումէլի Գաղասկերի, բառնալ այնուհետեւ զհակառակութիւնս Յունաց, և չյուզել այլ եւս խռովութիւն, եւ ըստ այսմ մնաց տուաւ հրովարտակ Հայոց (١١٤٦ 'ի ٢٥ Շաբան ամսոյ) 'ի գանձատանէ (Մալիյէ)։ Եւ ապա յայտ արարին թէ հարկ է ջնջել զհրովարտակն Յունաց՝ զոր առեալ են 'ի Կայսերական յատենէ՝ և 'ի տեղի նորա արձանագրել զհրովարտակն Հայոց, չտալ միւսանգամ հրովարտակ Յունաց, մինչչեւ ակնարկեալ իցեն 'ի հին օրինագրութիւնս, գրեալ յեպիսկոպոսական դիւանին, 'ի մատուցանել Յունաց յատեան զայն հրովարտակ, մի ընկալցի՝ եւ առցի 'ի ձեռաց նոցա, եւ հրովարտակն Հայոց դիցի 'ի գործադրութեան մշտնջենաւոր։ Եւ 'ի տեսանել զարձանագրութիւնս հրովարտակին Հայոց 'ի Մալիյէն՝ վերըստին ետուն հրովարտակ նոցա՝ վարիլ ըստ առաջին սովորութեան, ջնջել զՅունացն՝ և պահել զՀայոցն, (١١٤٦ 'ի ١ Բամազան ամսոյ)։